ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ապրիլի 10-ից 12-ը Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև)՝ Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կլիմայի հարցերով հանձնաժողովի 17-րդ նստաշրջանի մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Դավիթ Կարապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ժնև, 10.04.2018թ. – 12.04.2018թ.:

4. **Հրավիրող կողմը.**

   Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կլիմայի և ջրային ռեսուրսների դեպարտամենտի տնօրեն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության Կլիմայի հարցերով հանձնաժողովի 17րդ նստաշրջանի, ինչպես նաև «Քաղաքականության մշակման և որոշումների կայացմանը նպաստող կլիմայական ծառայություններ» տեխնիկական համաժողովի աշխատանքներին:

6. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվեցին ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների կարիքները, ինչպես նաև անհրաժեշտ միջոցառումները՝ կլիմայական ծառայությունների որակի բարելավման և որոշումների կայացման համար: Կլիմայական ծառայությունների ոլորտում առանցքային շահառուների մասնակցությամբ բարձր մակարդակով կազմակերպված պանելային քննարկումների ժամանակ քննարկվեցին միասնական կլիմայական ծառայությունների հնարավորությունները, կլիմայական ծառայությունների

մատուցման արդյունավետության բարձրացման և կարողությունների զարգացման առաջնայնությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովին ելույթ եմ ունեցել՝ ներկայացնելով զեկույց, թե Հիդրոմետ ծառայությունը ինչպես կարող է օգտվել ՀՕԿ-ի կլիմայի հարցերով հանձնաժողովի ընձեռած հնարավորություններից՝ բարելավելու կլիմայական ծառայությունները Հայաստանում:

ՀՕԿ-ի կլիմայի հարցերով հանձնաժողովի փորձագիտական խմբերում ընդգրկվելու համար իմ կողմից առաջարկվել է Հիդրոմետ ծառայության երկու աշխատակցի թեկնածություն:

Ծրագրից դուրս հանդիպումներ եմ ունեցել Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության զարգացման և տարածաշրջանային գործունեության դեպարտամենտի տնօրեն Մարի Պաուհերի հետ, ինչպես նաև ՀՕԿ-ի Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչների հետ: Քննարկվել է ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայությանը տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունները: Ներկայացվել է նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված ԱԻՆ Հիդրոմետ ծառայության արդիականացման ճանապարհային քարտեզը:

8. **Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նախնական համաձայնություն է ձեռք բերվել ՀՕԿ-ի զարգացման և տարածաշրջանային գործունեության դեպարտամենտի աջակցությամբ Հիդրոմետ ծառայությանը առաջնային անհրաժեշտության տեխնիկական աջակցություն տրամադրելու վերաբերյալ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հիդրոմետ ծառայությանը տեխնիկական աջակցություն տրամադրելու հարցը քննարկվելու է ՀՕԿ-ի զարգացման և տարածաշրջանային գործունեության դեպարտամենտի կողմից իրականացվող կամավոր համագործակցության ծրագրի շրջանակներում՝ առաջիկա մեկ ամսվա ընթացքում:

10. Գործուղվողը.

Դավիթ Կարապետյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

13/04/2018թ.